ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 1-ին կայացած նիստում քննարկվեցին բնական գազի փոխադրման, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման և բնական գազի բաշխման սակագների սահմանման մասին հարցերը և սահմանվեցին հետևյալ սակագները (առանց ԱԱՀ-ի)՝

1. բնական գազի փոխադրման սակագինը՝ 8229.741 դրամ/հազ. խմ՝ մինչ այդ գործող 8086.109 դրամ/հազ. խմ-ի փոխարեն,
2. գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 24.042 դրամ/հազ. խմ՝ մինչ այդ գործող 22.706 դրամ/հազ. խմ-ի փոխարեն,
3. բնական գազի բաշխման սակագինը՝ 19664.779 դրամ/հազ. խմ՝ մինչ այդ գործող 18674.936 դրամ/հազ. խմ-ի փոխարեն:

Հաշվի առնելով գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագների վրա ազդող դրական և բացասական բոլոր գործոնները՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վերջնական սպառողների սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջացել:

Սահմանված սակագներն ուժի մեջ են մտել 2024 թվականի օգոստոսի 1-ից:



Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների՝ գործող և ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին (01.08.2023-31.07.2024)	Առաջարկվող սակագին (01.08.2024-ից)
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	8 086.109	8 229.741
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	22.706	24.042
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	18 674.936	19 664.779

